Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ<<Երևանի Ֆ. Նանսենի անվան հ.150 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի աշխարհագրության 1/մեկ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է /Ձև 1/
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթությանմասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/
5. Թափուր աշխատատեղերը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության օրվանից մինչև 2023թ. սեպտեմբերի 27-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 10.00-ից մինչև 15.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. սեպտեմբերի 29-ին՝ ժամը 13.00-ին ,Երևանի Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան ՆորՆորքի 4-րդ զանգված Ակ. Բակունցի 6:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/ 64 50 00 հեռախոսահամարով: